

Հավելված  
Հայաստանի Հանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
2018 թվականի հուլիսի 25-ի №Ս որոշման

Հավելված  
«Հաստատված է Հայաստանի Հանրապետության հանրային  
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի  
2008 թվականի հուլիսի 30-ի №403Ա որոշմամբ

**«Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից Երևան քաղաքում, Արագածոտնի և Արմավիրի մարզերում շարժական ռադիոկապի ցանցի կազմակերպման համար 163,400ՄՀգ, 163,775ՄՀգ և 163,950ՄՀգ հաղորդման/ ընդունման ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության**

## **Պայմանները**

**(Թույլտվություն №0412, տրված Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008թ. հուլիսի 30-ի №403Ա որոշմամբ)**

### **1. Սահմանումներ**

1. Սույն թույլտվությունում օգտագործված հիմնական հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.
  - 1) Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
  - 2) Թույլտվություն ունեցող անձ կամ Կարգավորվող անձ՝ «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերություն.
  - 3) Թույլտվություն՝ Հանձնաժողովի կողմից Կարգավորվող անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է ռադիոհաճախականություն օգտագործելու նրա իրավունքը և պարտականությունը.
  - 4) Ֆորս մաժոր՝ արտակարգ և անկանխելի դեպքեր և հանգամանքներ, որոնք ստեղծվել են Կարգավորվող անձի կամքից անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսևորումները, ինչպես, օրինակ, ջրհեղեղները,

երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաև սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ, ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք խոչընդոտում են Կարգավորվող անձի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ ուժերի ազդեցությունը:

## 2. Թույլտվության գործողության ժամկետը

2. Թույլտվությունը ուժի մեջ է մտնում 2008 թվականի օգոստոսի 14-ից:
3. Թույլտվությունը գործում է մինչև 2028 թվականի օգոստոսի 14-ը:

## 3. Ռադիոհաճախականության օգտագործման էությունը կազմող գործառույթները

4. Թույլտվությունը ուժի մեջ մտնելու պահից Կարգավորվող անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Երևան քաղաքում, Արագածոտնի և Արմավիրի մարզերում ներարտադրական նպատակով շարժական ռադիոկապի ցանցի շահագործմամբ օգտագործել 163,400ՄՀց, 163,775ՄՀց և 163,950ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունները՝ հետևյալ տեխնիկական ցուցանիշներով՝

- 1) բազային ռադիոկայանների տեղադրման վայրը և տեղադրման վայրերի աշխարհագրական կոորդինատները՝

Բազային կայանի հերթական համարը	Բազային ռադիոկայանի տեղադրման վայրը	Աշխարհագրական կոորդինատները	
1	2	3	
<b>Երևան քաղաքի կայաններ</b> («Զվարթնոց» օդանավակայանի տարածք)			
1	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք		

2	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենքի հարակից տարածքի «Աշտարակ»		
<b>Արագածոտնի և Արմավիրի մարզերի կայաններ</b>			
1	Արագածոտնի մարզ, ք.Ապարան, ՎՌԿ, «Մռավյան» օբյեկտ		
2	Արմավիրի մարզ, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության ռադիոհաղորդիչ կենտրոն		
3	Արմավիրի մարզ, գ.Սարալանջ, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «ԱԱՌԿ - Անդրանիկ» օբյեկտ		
<b>Երևան քաղաքի կայաններ</b>			
1	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության օբյեկտ		
2	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք		
3	ք.Երևան, Ազատության 24/1, ԱՀԿ-28		
4	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «Իրտիշ» օբյեկտ		
5	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «Նավիգացիա» օբյեկտ		
6	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք		

3) ընդգրկման գոտին՝ Երևան քաղաք, Արագածոտնի և Արմավիրի մարզեր.

4) բազային ռադիոկայանների հզորությունը՝

Բազային կայանի հերթական համարը	Բազային ռադիոկայանի տեղադրման վայրը	Հզորությունը (Վտ)
1	2	3
<b>Երևան քաղաքի կայաններ</b> («Զվարթնոց» օդանավակայանի տարածք)		
1	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք	50
2	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենքի հարակից տարածքի «Աշտարակ»	35
<b>Արագածոտնի և Արմավիրի մարզերի կայաններ</b>		
1	Արագածոտնի մարզ, ք.Ապարան, ՎՌԿ, «Մռավյան» օբյեկտ	50
2	Արմավիրի մարզ, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության ռադիոհաղորդիչ կենտրոն	35
3	Արմավիրի մարզ, գ.Սարալանջ, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «ԱԱՌԿ - Անդրանիկ» օբյեկտ	8
<b>Երևան քաղաքի կայաններ</b>		
1	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության օբյեկտ	50
2	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք	8
3	ք.Երևան, Ազատության 24/1, ԱՀԿ-28	8
4	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «Իրտիշ» օբյեկտ	8
5	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «Նավիգացիա» օբյեկտ	8

6	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք	50
---	---	----

5) հատկացված ռադիոհաճախականությունները՝

Բազային կայանի հերթական համարը	Բազային ռադիոկայանի տեղադրման վայրը	Հատկացված ռադիոհաճախականությունը (ՄՀց)
1	2	3
<b>Երևան քաղաքի կայաններ</b> («Զվարթնոց» օդանավակայանի տարածք)		
1	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք	163,400
2	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենքի հարակից տարածքի «Աշտարակ»	163,400
<b>Արագածոտնի և Արմավիրի մարզերի կայաններ</b>		
1	Արագածոտնի մարզ, ք.Ապարան, ՎՌԿ, «Մռավյան» օբյեկտ	163,775
2	Արմավիրի մարզ, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության ռադիոհաղորդիչ կենտրոն	163,775
3	Արմավիրի մարզ, գ.Սարալանջ, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «ԱԱՌԿ - Անդրանիկ» օբյեկտ	163,775
<b>Երևան քաղաքի կայաններ</b>		
1	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության օբյեկտ	163,950
2	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա»	163,950

	փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք	
3	ք.Երևան, Ազատության 24/1, ԱՀԿ-28	163,950
4	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «Իրտիշ» օբյեկտ	163,950
5	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «Նավիգացիա» օբյեկտ	163,950
6	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք	163,950

6) ճառագայթման դասը՝ 16K0F3E.

7) անտենաների տեսակը՝ ցցաձող.

8) անտենաների բարձրությունը երկրի մակերեսից՝

Բազային կայանի հերթական համարը	Բազային ռադիոկայանի տեղադրման վայրը	Անտենայի բարձրությունը երկրի մակերեսից (մետր)
1	2	3
<b>Երևան քաղաքի կայաններ</b> («Զվարթնոց» օդանավակայանի տարածք)		
1	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք	15
2	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենքի հարակից տարածքի «Աշտարակ»	27
<b>Արագածոտնի և Արմավիրի մարզերի կայաններ</b>		
1	Արագածոտնի մարզ, ք.Ապարան, ՎՌԿ, «Մռավյան» օբյեկտ	8

2	Արմավիրի մարզ, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության ռադիոհաղորդիչ կենտրոն	12
3	Արմավիրի մարզ, գ.Սարալանջ, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «ԱԱՌԿ - Անդրանիկ» օբյեկտ	8
<b>Երևան քաղաքի կայաններ</b>		
1	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության օբյեկտ	15
2	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք	10
3	ք.Երևան, Ազատության 24/1, ԱՀԿ-28	10
4	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «Իրտիշ» օբյեկտ	10
5	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության «Նավիգացիա» օբյեկտ	10
6	ք.Երևան, «Զվարթնոց» օդանավակայան, «Հայաէրոնավիգացիա» փակ բաժնետիրական ընկերության վարչական շենք	10

9) անտենաների ճառագայթման ազիմուտը՝ 360 աստիճան:

5. Կարգավորվող անձը պարտավոր է շարժական ռադիոկապի ցանցը շահագործել միայն ներարտադրական նպատակների համար:
6. Կարգավորվող անձն իրավունք չունի իր ներարտադրական ցանցը փոխկապակցել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցին:
7. Կարգավորվող անձն իրավունք չունի ներարտադրական ցանցի միջոցով մատուցել հատուցելի կամ անհատույց էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ:

8. Կարգավորվող անձը պարտավոր է ռադիոհաճախականությունն օգտագործել այնպես, որ վնասակար ազդեցություն չունենա այլ անձանց ռադիոհաճախականության օրինական օգտագործման վրա:
9. Թույլտվության պայմանների 8 կետի խախտման դեպքում Հանձնաժողովը կարող է փոփոխություն կատարել թույլտվության մեջ:

#### **4. Կարգավորվող անձի գործունեությունը**

10. Կարգավորվող անձը պարտավոր է իր գործունեությունը իրականացնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերի, Թույլտվության պայմանների և այլ իրավական ակտերի համաձայն:
11. Թույլտվությունը չի կարող օգտագործման տրվել այլ անձանց, օտարվել կամ գրավադրվել՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:
12. Կարգավորվող անձը պարտավոր է Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված շարժական ռադիոկապի ցանցի տեխնիկական նախագիծը՝ երկու օրինակից: Տեխնիկական նախագիծը պետք է ընդգրկի բազային կայանի ծածկույթի (սպասարկման գոտու) գծապատկերը աշխարհագրական քարտեզի վրա, ռադիոկապի կազմակերպման սխեման՝ նշելով անտենաների ազիմուտները, տիպերը, բարձրությունները երկրի մակերևույթից, ռադիոհաճախականությունների տիրույթում էլեկտրամագնիսական իրավիճակի պլանը, նշելով առկա կայանները և ռադիոհաճախականությունները, որոնց համար իրականացվում է հաշվարկ:
13. Թույլտվության պայմանների 12 կետով նախատեսված տեխնիկական նախագծի ներկայացումից հետո թույլտվության պայմանները կարող են փոփոխվել:
14. Կարգավորվող անձը պարտավոր է Թույլտվության պայմանների 4-րդ կետում նշված որևէ տեխնիկական ցուցանիշի փոփոխության դեպքում եռամսյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել կապի գծով քաղաքաշինության



փաստաթղթերի մշակման լիցենզիա ունեցող անձանց կողմից մշակված շարժական ռադիոկապի ցանցի տեխնիկական նախագիծը՝ երկու օրինակից:

15. Կարգավորվող անձը պարտավոր է շարժական ռադիոկապի ցանցի շահագործումից առնվազն 3 օր առաջ տեղեկացնել Հանձնաժողովին շահագործման մասին:
16. Կարգավորվող անձի բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքն այլ անձի փոխանցելուց 15 աշխատանքային օր առաջ Կարգավորվող անձը պարտավոր է դրա մասին գրավոր տեղեկացնել Հանձնաժողովին:
17. Կարգավորվող անձը պարտավոր է ապահովել Թույլտվությամբ հատկացված ռադիոհաճախականության արդյունավետ օգտագործումը:
18. Կարգավորվող անձը պարտավոր է իր տիրապետման տակ գտնվող սարքավորումների շահագործման, տեխնիկական սպասարկման և նորոգման ընթացքում ապահովել քաղաքացիների, սպասարկող անձնակազմի կյանքի և առողջության անվտանգությունը:
19. Կարգավորվող անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իր մոտ անցկացված՝ Հանձնաժողովի կողմից կարգավորվող գործունեությանն առնչվող աուդիտորական կամ իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները և արձանագրությունները (ակտերը)՝ համապատասխան գործողությունների ավարտից հետո 10-օրյա ժամկետում:
20. Կարգավորվող անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարել ռադիոհաճախականության օգտագործման վճարները եռամսյակը մեկ անգամ՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը:
21. Կարգավորվող անձը պարտավոր է իր վերակազմակերպման կամ անվանափոխման, կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում այդ փոփոխությունների իրավական ուժ ստանալու օրվանից սկսած 15-օրյա ժամկետում այդ մասին տեղեկացնել Հանձնաժողովին՝ կցելով նշված տեղեկությունները հավաստող համապատասխան փաստաթղթերը:
22. Կարգավորվող անձը՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան, պարտավոր է իր գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնել Հանձնաժողով:

23. Կարգավորվող անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվության հավաստիության համար:
24. Կարգավորվող անձի՝ Հանձնաժողով ներկայացրած տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Կարգավորվող անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «գաղտնապահական տեղեկատվություն»:  
Կարգավորվող անձն իրավունք ունի ներկայացնել փաստարկներ և հիմնավորումներ՝ ապացուցելու համար, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «գաղտնապահական տեղեկատվությունը») հրապարակումը կարող է վնասել իր գործունեության շահերին: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Կարգավորվող անձի խնդրանքը:
25. Կարգավորվող անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել Թույլտվության պայմանների խախտման:

## **5. Գործունեության վերահսկում**

26. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:
27. Թույլտվության պայմանների կատարման կամ պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի ներկայացուցիչներն իրավունք ունեն անարգել մուտք գործել Կարգավորվող անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Կարգավորվող անձը պարտավոր է աջակցել Հանձնաժողովին:
28. Հանձնաժողովն անհրաժեշտության դեպքում, իր կողմից սահմանված կարգով և ժամկետներում, իրավունք ունի իրականացնելու Թույլտվության պայմանների պահպանման ուսումնասիրություն և Հանձնաժողով ներկայացված տեղեկատվության հավաստիության ստուգում:

## **6. Պատժամիջոցներ**

29. Կարգավորվող անձի կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանձնաժողովի ընդունած իրավական

ակտերի պահանջները կամ Թույլտվության պայմանները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ խախտելու դեպքում Հանձնաժողովն իրավասու է կիրառել հետևյալ պատժամիջոցները՝

- 1) տույժերի և տուգանքների կիրառում,
- 2) Թույլտվության փոփոխում,
- 3) Թույլտվության կասեցում,
- 4) Թույլտվության գործողության դադարեցում:

30. Կարգավորվող անձը Թույլտվության 29 կետի համաձայն չի ենթարկվում պատասխանատվության, եթե արձանագրված խախտումները Ֆոբս մածորի հետևանք են:

#### **7. Թույլտվության փոփոխություն, ժամկետի երկարաձգում, Թույլտվության կորստի դեպքում կրկնօրինակի տրամադրում**

31. Շարժական ռադիոկապի ցանցի բազային կայանի տեղադրման և շահագործման ընթացքում տեխնիկական ցուցանիշների ցանկացած փոփոխության դեպքում Կարգավորվող անձը անհապաղ դիմում է Հանձնաժողով՝ Թույլտվության մեջ փոփոխություններ կատարելու կամ նոր Թույլտվություն ստանալու հայտով:

32. Թույլտվության պայմաններում փոփոխություններ կարող են կատարվել Հանձնաժողովի կամ Կարգավորվող անձի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

33. Թույլտվության կորստի (կորցնելու, ոչնչանալու և այլն) կամ գործողության ժամկետի երկարաձգման անհրաժեշտության դեպքում Կարգավորվող անձը պարտավոր է հայտ ներկայացնել Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:

#### **8. Այլ պայմաններ**

34. Կարգավորվող անձը պարտավոր է շարժական ռադիոկապի ցանցի բազային կայանի տեղադրման շինարարական-մոնտաժային աշխատանքներն իրականացնել շինարարական նախագծին, ինչպես նաև տվյալ բնագավառում

Հայաստանի Հանրապետությունում գործող տեխնիկական կանոնակարգերին և իրավական ակտերին համապատասխան:

35. Թույլտվության գործողությունը կարող է դադարեցվել Կարգավորվող անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա:

## **9. Ծանուցում**

36. Թույլտվության վերաբերյալ պաշտոնական բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ հաղորդագրությունները Կարգավորվող անձի կողմից պետք է ներկայացվեն գրավոր և ուղարկվեն սուրհանդակի միջոցով, պատվիրված նամակով կամ առձեռն հանձնվեն Հանձնաժողով:»: